

նուիրէք պայծառացնելու ապիկար հօր և մօր մթազգած կայանը յոյսի և որդիական սիրոյ նշոյլներով, երբ կրտսեր եղբօր ապագայ մը կը պատրաստէր, երբ կը զգար թէ տառապանքի մատնուած հոգիներու նոր զուարթ աշխարհ մը կը բանար՝ ուր իրենց օրերը հեզահամբոյր կը սահին, և թէ այդ՝ ձեր գործն է, ձեր անխոնջ ջանքերուն արդիւնքն է, ձեր երիտասարդական հոգւոյն կոթողն է»¹⁷:

Ու այսպէս դեռ երկար, իր յիշուած «Կանանց անգործութիւնը» յօդուածին մէջ, կը խրախուսէ Տիւսար հայ դեռատի աղջիկները՝ որ աշխատութեան հետ կապեն իրենց հոգին, որով միայն կրնան բարձրանալ և ազնուանալ, քան այն բոլոր ազնուական կարծեցեալ կիները, որ պչրանքի ու պաճուճանքի, և սովորական դասակարգի կիները արհամարհելու իրենց

պժգալի յոխորտութեան մէջ կը կարծեն գտնել իրենց գերազանցութիւնը:

Ասոնք են ահա Տիւսարի ընկերաբանութեան հիմնական գիծերը՝ որ հայ կնոջ ազատագրութեան հետ կապ ունին, որոնց մով անժխտելիօրէն արժանիք ունի նէ պոլսահայ կինը եւրոպական ու ամերիկեան ընթերցումին մօտեցնելու ձեռնարկին մէջ: Իբրեւ ընկերաբան՝ իր կատարած այս տկար փորձն ալ մեծապէս գնահատելի է, որուն օգտակար հետեւանքները վայելեց հայկական ընկերութիւնը՝ երբ արդէն Տիւսար վերջացուցած էր իր պայքարը և կեանքը:

(Վերջ) Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

(17) Տիւսարի յօդուած մը՝ «Կանանց անգործութիւնը» Թէոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ին մէջ, 1926, էջ 239-243:

ԳԵՂՈՆ ՀԱՅ ԼԵՋՈՒԻՆ

Ծովածաւալ ու ծաղկաշէն յոյս պարտեց եւ դու՝ Հայ լեզու,
Մշտակարկաւ ու աղեծուի, չիւնջ վրտակ եւ դու՝ Հայ լեզու,
Դուք կը հոսիս Արարատէն միւսեւ ըստիւնք գերդ մեղրագետ.
Հայու Ողիւն աւելեց պահող՝ միւս կրքակ եւ — դու՝ Հայ լեզու...

Դուք կանգնած եւ գերդ զրարքուն մեր պատմութեան վեմին դիմաց,
Արարատի սուրբ ձեռքիդ բիւ կերպիւ իջած եւ ցած,
Կը փոփոյի քու անունիդ սիւնն արիւնքող երկնաւրաց,
Ազատատենէ ու աներկիւ յաղթ բունակ եւ դու՝ Հայ լեզու...

Հետեւեալն ու մօտեւեալն մեզ տուն կանգող ձայն եւ թարի,
Հայրենադարձ մեզ շեփորող հաւայնական ձայն եւ արի,
Մարգագետնի մէջ դայրաշող շէն սոխակի ձայն եւ փայրի,
Հիւն պատմութիւնն ոգեկոչող նոր նրագ եւ դու՝ Հայ լեզու...

Դուք՝ մանուկի շորքիւն ծաղկած՝ անմեղութեան փայրի եւ ձերմակ,
Ու հայ կոյսի անբիծ ձակտիւն՝ յար շողացող զարդ եւ սոստակ,
Մեր աներշատ ու կուռ կամրիւն՝ յաւատ կանգուն բերդ եւ միակ,
Անպրոպագոռ երկիւնքներու շանրող փայրակ դու՝ Հայ լեզու...

ՕՆԵԻԿ ԱՅՎԱԶԵԱՆՑ

22 փետր 1947
Մոսկով

ԱՆԴԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՐՑԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵՆԷՆ

(Շար. տես «Բազմ.» 1949, № 5-6 էջ 97-101)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քննադատական հակիրճ անդրադարձ թելեհեներուն վերջ դնելով, ներկայիս մեր նպատակն է քննական ուսումնասիրութեամբ մը լուսարանել անդենական կեանքի մասին հրապարակ ելած բանավէճը՝ դաւանական ուղիղ կէտերը շեղտելու, սխալ ու մոլոր կարծիքներն ալ հերքելու դիտումով⁽¹⁾:

Աստուածաբանական մեր տեսութիւնը պիտի ջանանք ընթացիկ ոճով ներկայացնել, ընթերցողներու ուշադրութիւնը չսպառելու համար երկար ու անտեղի չեղումներով. աւելի խորը պրպտողներուն՝ ամփոփ ակնարկութիւններ պիտի թուենք ստորեւ, ծանոթութիւններու մէջ:

1. — Հիմնական նկատողութիւններ

Աստուծոյ դոյութեան եւ հոգւոյ անմահութեան անուրանալի դոյգ ճշմարտութեան

(1) Վիճարանութիւնը, որ կարծէք պահ մը դադրած էր, դեռ կը շարունակուի: Նախապէս մեր նշանակածներէն գատ, ահա միւս նոր գրութիւններուն ցուցակը. Մասիս, 1949. Մարտ 16, էջ 2. «Որդեք գեհնի», գրեց՝ Հայ հաւատացեալ. Հասկ, 1949. № 5, էջ 131-135. «Վերջ քաւարանի խնդիրին». գրեց՝ Փառն Եպիսկոպոս. Մասիս, 1949. Յունիս 2, էջ 2. «Խօսքը ջուխ է. մէկը ըսէ, մէկը լսէ». գրեց՝ Հայ հաւատացեալ. Հասկ, 1949. № 6-7, էջ 191-192. «Վերջին խօսք՝ Հայ հաւատացեալի — Ջուխտ խօսք-ի». գրեց՝ Փառն Եպիսկոպոս. Մասիս, 1949. Օգոստոս 10, էջ 2. «Խօսքը ըսածդ կ'որ է. խորհէ, հարը զ'որ է». գրեց՝ Հայ հաւատացեալ:

Թիւնները կապուած են մարդկային ցեղի ծագումին հետ: Ծանօթ են մեր օրերու դիտական եւ ազդագրական հետազոտութիւնները՝ որոնք ակնյայտնի ցոյց կու տան այս անխախտ համոզումներու գոյութիւնը նախնական ժողովուրդներու մօտ, կրօնքի եւ բարոյականի ողջ ըմբռնումներով:

Բարձրացած իմացական տեսարանութեան՝ հեթանոս փիլիսոփայութեան երկու բեւեռները կը կազմեն այս ճշմարտութիւնները, որոնց շուրջ կը հոլովուին Պլատոնի, Արիստոտէլի, Կիկերոնի, Սենեկայի սքանչելի դրուս-գործոցները, թէպէտ երբեմն տարտամ որոնումներով, սայթաքումներով եւ կամ դադափարային չափազանցութիւններով խառն:

Երբայական շրջանի բարոյականութեան հիմերն ալ այս երկու ճշմարտութիւնները եղած են, ամէնուն յայտնի՝ սկզբնական ժամանակներէն իսկ:

Բայց ամէնէն աւելի քրիստոնէական աւետարանի հրաչքներու եւ հոգեկան վարդապետութեան լոյսն է, որ փարատելով հեթանոսական ստուերները եւ պատուելով հրէական վարդապետը, բարձրացուցած ու դրած է մարդս արարչական դադունքներու խորհուրդին առջեւ. ու երկրածին բանաւոր մարդը՝ երկնային զօրութենէ մը լուսաւորուած՝ կրցած է ուժգին կրկնել. «Կը հաւատամ մէկ Աստուծոյ... կը հաւատամ յաւիտեական կեանքին»:

Ահա ուրեմն քրիստոնէական հաւատամքին ալ երկու անսասան բեւեռները. Այբը եւ Քէն:

Այս է բանաւոր էակին իմացական զե-
րազոյն ճիշդ այս աշխարհիս վրայ. այս
է յաւիտենական ու զերիւրական ճշմար-
տութիւնը, զոր դժբախտաբար չեն ուզեր
ըմբռնել ներկայ դարուս նիւթապաշտ եւ
ստորաքարը հոսանքներ, ծայրայեղ ազա-
տութեան եւ մարդ-անհատի զերարժանի-
քի մոլար դրութիւններու հետամուտ:

2. — Քննելի հարցեր

Այս ամուր հիմերուն վրայ հանդիման ,
զիտակից քրիստոնեան կարող է թեւակո-
խել անդենական կեանքի հարցերու մար-
դը, աւելի եւս տեղեակ ըլլալու համար
քրիստոնէական վարդապետութեան տը-
կաներուն:

Արդարեւ, ի՞նչ կը պատահի հոգիին՝
մարդու մը մահէն վերջ. ո՞ր կ'երթայ,
ի՞նչ վիճակի կը սահմանուի, ի՞նչ կ'ընէ
հոգին. բնական հարցեր են որ ուսեալ
անհատի մը մտքին մէջ կ'արթնան:

Քրիստոնէական կրօնքը յայտնապէս կը
սորվեցնէ՝ թէ աշխարհի կատարածին՝
բոլոր մեռելները յարութիւն պիտի առ-
նեն, ապա տիեզերական դատաստան մը
պիտի կատարուի եւ անկէ վերջ՝ արդար-
ները եւ սուրբերը պիտի մտնեն արքա-
յութիւն, այսինքն յաւիտենական երա-
նութեան մէջ, ուր պիտի տեսնեն Ամենա-
սուրբ Երրորդութիւնը եւ հրեշտակներուն
հետ պիտի փառաւորեն զԱստուած. իսկ
մեղաւորները պիտի զլորին յաւիտենական
կրակին մէջ եւ հոն՝ դժոխքին մէջ՝ սա-
տանաներուն հետ պիտի տանջուին ան-
վերջ:

Արդ, կրնայ մտածել քրիստոնեան,
մինչեւ յարութիւն առնելու օրը՝ մեռել-
ներու հոգիները ո՞ր կը կենան. արդեօք
յատուկ տե՞ղ մը, կայանի՞ մը մէջ կը
պահուին, հոն ի՞նչ կ'ընեն. արդարեւ
մեղաւորներէն դատուած են թէ միասին
կը սպասեն յարութեան եւ դատաստանին.
զիտե՞ն արդեօք արդարեւ կամ մեղա-

ւորներու թիւին մէջ ըլլալին, թէ ոչ:

Ահա նաեւ ուրիշ կարեւորութիւններ. չի՞
կրնար ըլլալ որ ճիշդ մահուան օրն իսկ
արդարին հոգին արքայութիւն մտնէ, իսկ
մեղաւորինը՝ դժոխք, ու այնտեղ սպասէ
յարութեան եւ ընդհանրական դատաստա-
նին, որմէ վերջ դարձեալ իր նախկին տե-
ղը երթայ, բայց այս անգամ հոգիով ու
մարմնով ամբողջովին:

Հասկա թեթեւ մեղքերով արքայաւոր-
ուած հոգիները, ո՞ր պիտի երթան ա-
նոնք. արդարեւ արժանի չեն արքայու-
թեան, ոչ ալ դժոխքի. ի՞նչ կրնայ ըլլալ
անոնց վիճակը: Անշուշտ կարգադրութիւն
մ'ալ անոնց մասին պիտի կատարէ Աստ-
ուած. անտարակոյս, որովհետեւ բոլոր
այս եղելութիւնները իրենք իրենցմէ չեն
կրնար պատահիլ մեքենական կերպով. եւ
միւս կողմէ զիտենք որ հոգիներու եւ
մարմիններու բացարձակ Տէրը մի միայն
Աստուած է. ուրեմն ինքն է որ կը վճռէ
ու կը տրամադրէ ըստ արժանիքներուն:

Այսպէս մեր միտքը կրնար դեռ շատ
թարթախիլ. բայց քրիստոնէական յայտ-
նութիւնը եւ Ս. Եկեղեցւոյ դարաւոր ա-
ւանդութիւնը կու գան մեզի սորվեցնելու
միակ ճշմարտը՝ այս զանազան հնարա-
ւորութիւններու մէջէն:

Հոս է ահա մեր ուսումնասիրութեան
նպատակը. բացատրել թէ ո՞րն է ճշմա-
րիտ վարդապետութիւնը: Աւելի յստակ.
բացատրել թէ ո՞րն է Հայ Եկեղեցւոյ հա-
րազատ ու ճշմարիտ վարդապետութիւնը՝
անդենական կեանքի հարցերու մասին:

3. — Աղբիւրներ եւ ուղեգիծ

1) Ներկայ ուսումնասիրութեան կարե-
ւոր մէկ աղբիւրը կը կազմեն Հայ մատե-
նադիրները, որոնք այս հարցին մասին ո-
րոշ հաստատման եւ ակնարկներ ունին
իրենց վարդապետական զրուածներու
կամ ճառերու մէջ:

Հեղինակի մը հարազատութեան եւ ա-

նոր երկերուն վաւերականութեան մասին
վերջին տուեալները աչքի առջեւ ունենալէ
վերջ, անկողմնակալ քննութիւնը կը պա-
հանջէ՝ որ երբ հարցը հեղինակի մը կար-
ծիքին շուրջ է, մարդ նկատի առնէ այդ
միեւնոյն հեղինակին բոլոր նոյնիմաստ
հաստատմանը, որոնք անշուշտ հարցը ա-
ւելի կը լուսարանեն ու կ'ամբողջացնեն.
մեծ եւ անդամանելի սխալ մըն է նպաս-
տաւոր հաստատած մը միայն յիշատակել,
քմածին մեկնութիւն մը տալ՝ նախորդը
սածները չիտխելու համար, եւ լուս-
թեամբ անցնիլ ուրիշ հաստատմանը վը-
րայէն, որոնք տարբեր դոյն ունին եւ ու-
րիշ կերպ մեկնուելու կարօտ⁽²⁾:

Մանաւանդ թէ, ողջամիտ քննութիւնը
կը պահանջէ որ ուսումնասիրութիւնը ըս-
կիւր առնէ բացայայտ եւ որոշ հաստատա-
ման, եւ անոնց միջոցով յանդի հուսի
մեկնելու եւ բացատրելու նոյն հեղինակին
աւելի մութ, խրթին եւ վիճելի կէտերը.
այլապէս ունայն վիճարանութիւն մը կը
կատարուի, երկու կողմէն ալ քաջքշուքի
պէս բան մը, որ յաճախ կը կորսնցնէ իր
լուրջ ընթացքը, ինչպէս նկատել կու տան
ուղղադատ ընթերցողներ՝ Գերշ. Փառէն
Սրբազանի «վերջին խօսք»երու առիթով:

2) Կարեւոր մէկ աղբիւր մ'ալ մեր շա-
րականներն են:

Շարականները, չորրորդ դարէն սկսած

(2) Այս տեսակետով Գերշ. Փառէն Եպսկ. յօդուա-
ծաւորը շատ տեղեր կը կադար. մէկ քանի նմոշներ
ցոյց տուին արդէն. Բազմավէպ 1949. թ. 3-4, էջ 81-84.
թ. 5-6, էջ 98-99. զի ուրիշ առիթներ ալ պիտի ու-
նենանք:

(3) Զարմանքով ակնարկած ենք նախապէս (Բազմա-
վէպ 1949. թ. 5-6, էջ 99) թէ ինչպէս Գերշ. Փառէն
Եպսկ. իր նպատակին չճանաչող բացատրութիւնները
«Բանաստեղծութիւն» կը յորջորջէ ու հարեւանցի կ'ու-
սուսէ. անշուշտ, որպէսզի չըլլայ թէ իր կանխակալ
կարծիքէն հրաժարի. Այս չէ սակայն աղբիւրներ գոր-
ծածելու ճիշդ ուղեգիծը:

(4) Հրտ. Սահակ Վրդ. Ամատունի. Վարդապետ
1911. էջ 199.

մինչեւ Միսիթար Արքահօր օրերուն յօրին-
ուած երգեր, ընդհանրապէս դործեր են
հայրապետներու, զիտնական եւ սուրբ
վարդապետներու, որոնք տէրունական եւ
սուրբերու տօները եւ Ս. Խորհուրդներու
մատակարարումը աւելի չքեղ ու հանդի-
սաւոր դարձնելու, ժողովուրդին ալ բա-
րեպաշտութիւնը աճեցնելու նպատակով
զրած են զանազան առիթներով:

Անոնց մէջ յաճախ բանաստեղծական ս-
տացուածքներու հետ կը հանդիպինք դա-
ւանական պարզ ու ճշգրիտ (երբեմն աւելի
նրբիմաց) աստեղծութիւններու, ուր կը յայտ-
նուի Հայ Եկեղեցւոյ հաւատքը դործնա-
կանապէս ցուցադրուած՝ աղօթքի եւ փա-
ռարանութեան բանաձեւերու տակ⁽³⁾:

Այս տեսակետով անհատում աղբիւր են
մեր ուսումնասիրութեան:

Ձեռք զիտեր մանրամասնօրէն՝ թէ ար-
դեօք մասնաւոր ժողովներով կամ հայ-
րապետական կոնգրէսներով ընդունուած
եւ տարածուած են բոլոր շարականներն
ալ, եւ թէ ի՞նչպէս ԺԳ դարէն վերջ հետ-
զհետէ դուրս մնացած են «Հին եւ Նոր
պարականոն կամ անվաւեր շարական-
ներ»⁽⁴⁾. այս սակայն ստոյգ կը համա-
րինք որ մեր ներկայ շարականը, իրեւ
ծիսական ամբողջական մատեան մը, Հայ
Եկեղեցւոյ դաւանութեան դանձարանն է,
որ միշտ՝ ըլլալ կաթողիկոսարաններու,
ըլլալ վանքերու մէջ երգուած ու դործա-
ւած է, հետեւաբար հարազատ ու վա-
ւերական դործ մը, թէպէտ զանազան ժա-
մանակներու մէջ եւ զանազան անձերէ ճո-
խացած. սրբազան օղակն է ան որ դարե-
րուն մէջէն անցնելով կը կապէ մեզ Շնոր-
հալիի, Նարեկացիի, Կոմիտաս կթղ.ի,
Ս. Սահակի եւ Լուսաւորչի անեղծ հա-
ւատքին հետ:

Յաջորդով պիտի քննենք՝ թէ ո՞ր եմ
ներկայիս սուրբերու հոգիները:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
(Շարունակելի)